ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Աշակերտների համընդհանուր ներգրավվածությունը դասին տարբերակված ուսուցման միջոցով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ա. Հոխիկյան

ԴՊՐՈՑ՝ Երանոս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց

Մարտունի

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան——————————————————————————3

Գրական ակնարկ——————————————————————————-4

Տարբերակված ուսուցման բովանդակությունը——————————----
----------5

Ներդասարանային տարբերակում ——————————----------8

Տարբերակված տնային առաջադրանքներ——————————————
————--------11

Տարբերակված ուսուցման արտասահմանյան փորձը ——————12

Փորձարարական դաս 1—----------14

Փորձարարական դաս 2—----------15

Դասապլան 1——————————————————————----------16

Դասապլան 2——————————————————————-------19

Եզրակացություն ——————————————————————— 25

Օգտագործված գրականության ցանկ——————————————26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական գործունեություն իրականացնող յուրաքանչուր ուսուցիչ, իր մանկավարժական գործունեության ընթացքում առնչվում է ամբողջ դասարանը դասին ներգրավվելու խնդրին:Դասարանները սովորաբար բաղկացած են լինում ուսումնառության նկատմամբ տարբեր հետաքրքրություններ ցուցաբերող աշակերտներից, ինչը էականորեն բարդացնում է դասավանդող ուսուցչի գործը:
Հետազոտության համար խնդրո առարկա է հանդիսացել աշակերտների դասին ամբողջական չմասնակցելու հարցը:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում ես դասավանդել եմ տարբեր դասարաններում, ոսուցանել եմ զարգացվածության տարբեր աստիճաններ ու մակարդակներ ունեցող աշակերտների, մշտապես փորձել եմ գտնել աշակերտների ուսումնական գործունեությունը խթանող, ակտիվացնող ու զարգացնող մեթոդներ և ռազմավարություններ,որոնց միջոցով կկարողանամ ապահովել աշակերտների համընդհաուր ներգրավվածությունը դասին :

Այս հարցի հետ կապված բազմաթիվ քննարկումներ եմ ունեցել գործընկերներիս հետ: Արդյունքում եկել եմ այն եզրակացությանը, որ համընդհանուր ներգրավվածություն ապահովելու համար,մենք նույն առաջադրանքը չենք կարող հանձնարարել ամբողջ դասարանին և նրանցից նույն արդյունքը պահանջել: Յուրաքանչյուր երեխա պետք է իր հնարավորությանը համապատասխան առաջադրանք ստանա: Նաև գտնում եմ, որ բացարձակ անընդունակ աշակերտ չկա, յուրաքանչյուր երեխայի մեջ էլ կան ուժեղ կողմեր, և հմուտ մանկավարժը ուսուցումը պետք է կազմակերպի՝ հենվելով այդ կողմերի վրա, որը իր հերթին կմեծացնի ուսումանառության նկատմամբ աշակերտների հետաքրքրվածությունը:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ժամանակակից ուսումնական գործընթացում կիրառում են տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն, որը հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքները՝ իր հնարավորությունների, ընդունակությունների, շահերի սահմաններում:

Ծերտավորված կամ տարբերակված ուսուցում կիրառում են ոչ միայն այն դեպքում, երբ աշակերտներին առանձնացնում են ըստ ընդունակությունների, այլ նաև այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել ուսումնական նյութը: Այդ պատճառով էլ տարբերակված ուսուցումը պետք է կազմակերպել ինտեգրված ուսուցման հետ:

Շատ ուսուցիչներ խոսում են աշակերտների անհատականության մասին, բայց չկա հստակեցում, թե ինչպես հաշվի առնել աշակերտների առանձնահատկությունները: Դրա համար էլ պետք է տարանջատել « տարբերակում» և « անհատականություն» բառերը: Թվում է, թե դրանք նույնն են, բայց դա այդպես չէ:Տարբերակման ժամանակ հաշվի են առնվում աշակերտների գերիշխող հատկությունները (խմբի առանձնահատկությունները),իսկ անհատականության ժամանակ հաշվի են առնվում տվյալ աշակերտի անձնային առանձնահատկությունները: Այստեղ է, որ ի հայտ է գալիս տարբերակված ուսուցումը՝ որպես ուսումնառության միջոց և պայման:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել միջոցներ՝ նրա հետաքրքրությունների, ընդունակությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու զարգացման համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշակերտների ուսումնական պահանջները բավարարելու ամենարդյունավետ եղանակներից մեկը տարբերակված ուսուցումն է: Շատ հմուտ մանկավարժներ օգտագործում են տարբերակված ուսուցման ռազմավարություն, քանի որ այն թույլ է տալիս բոլոր աշակերտներին ներգրավել դասի մեջ:

Ինչպես գիտենք՝ դասարանները կազմավորվում են ըստ աշխակերտների տարիքի: Բայց այդ երեխաների նույն տարիքի լինելը չի նշանակում, որ նրանք ունեն զարգացման ու ընդունակության միևնույն մակարդակները: Ուսունական գործընթացում նրանք ցուցաբերում են գիտելիքների յուրացման տարբեր աստիճաններ և զարգացման տարբեր ձևեր ու հետաքրքրություններ: Ուսուցիչը այս դեպքում ուսուցումն իրականացնում է՝ հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտների վրա: Բայց այս երևութն էլ ունի իր բացասական կողմը: Սա արհեստականորեն կասեցնում է ուժեղ աշակերտների զարգացումը, նրանք ուսման նկատմամբ հետաքրքրությունը կորցնում են, իսկ թույլ աշակերտները այդպես էլ մնում են: Հարկ է նշել, որ միջին կարողությունների տեր աշակերտներն էլ իրարից տարբերվում են, ունեն տարբեր հակումներ ու հետաքրքրություններ, հոգեկան գործընթացի զարգացան տարբեր մակարդակներ:

Հետազոտությունից պարզ դարձավ, որ դասի ժամանակ, ուսումնական գործունեության ընթացքում, ուսուցիչը դժվարանում է այդ խմբին առանձնացնել՝ հաշվի առնելով աշակերտների միջև առկա տարբերությունները: Իսկ դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝ նախնական գիտելիքների տարբերությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչպիսի ընտանիքից է այդ երեխան, նրա բառապաշարը, մտավոր կարողությունները, արժեքային համակարգը, ճանաչողական կարողությունների տարբերությունները՝ ընկալումը, կենտրոնացված ուշադրության տևողությունը, հիշողությունը, մտածողությունը ու լեզուն:

Որքան տարբեր են աշակերտները, այնքան էլ տարեր են նրանց բնավորությունները:

Տարբեր բնավորության տեր աշակերտներ ունեն տարբեր սովորելու ոճ, մղում, հետաքրքրություններ, վերաբերմունք: Ուստի ժամանակակից ուսուցիչը

պետք է նոր մոտեցումներ ու եղանակներ կիրառի՝ փորձելով գտնել մի շարք հարցերի պատասխաններ.

- ***Ինչպե՞ս կարող եմ օգտակար լինել իմ աշակերտին***
- ***Ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ ուսուցանել***
- ***Ինչպե՞ս կարող եմ իմ աշակերտների վերաբերմունքը դպրոցի, դասի և ուսուցչի նկատմամբ ավելի դրական դարձնել:***

Ուսումնական գործընթացում այս խնդիրների լուծման համար արդյունավետ է կիրառել տարբերակված ուսուցում, որի դերն այսօր խիստ կարևորվում է:

Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը, որն էլ մեր ընկալմամբ ենթադրում է յուրաքանչյուր աշակերտի ուսուցման և զարգացման հարաբերակցում: Տարբերակված ուսուցումը ուսումնադաստիարակչական ճկուն գործընթաց է, որը բնութագրվում է սովորողների անհատական ընդունակությունների հաշվառմամբ:

Այս գործընթացի ժամանակ ուսուցիչը ոչ թե աշակերտներին է հարմարեցնում ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութն է հարմարեցնում աշակերտներին:Նյութը մշակում է, դարձնում մատչելի յուրաքանչյուր երեխայի համար: Այս մոտեցումը նպաստում է դասարանի համընդհանուր ակտիվացմանը, յուրաքանչյուր աշակերտ իր անելիքն է ունենում: Երբ ուսուցիչը ամողջ դասարանի առջև դնում է միևնույն առաջադրանքի պահանջ՝ հաշվի չառնելով աշակերտների անհատական, հոգեբանական կարիքները, ապա նա չի ապահովում որակյալ կրթություն, այն է՝ օգնել յուրաքանչյուր աշակերտի առաջ շարժվել ըստ իր կարողությունների ու ընդունակությունների: Այս կարևոր գործոնի անտեսումը հանգեցնում է նրան, որ աշակերտը չի հաղթահարում իր առջև ծառացած դժվարությունները, արյունքում տուժում են աշակերտները, նվազում է հետաքրքրությունը ուսման հանդեպ, ընկնում է նրանց ինքնագնահատականը:

Այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ զբաղված լինի իր ընդունակություններին համապատասխան հանձնարարությամբ, նույն դասարանի տարբեր աշակերտների համար ուսումնական ծրագրի միևնույն պահանջի համար նախատեսվեն տարբեր հանձնարարություններ: Աշակերտը այս դեպքում կդառնա ավելի ինքնավստահ:

Սակայն շերտավորումը չպիտի դառնա աշակերտներին պիտակավորելու միջոց: Ուղղակի յուրաքանչյուր երեխա պետք է ստանա իր կարողություններին ու հմտություններին համարժեք ծավալի ու բարդության աշխատանք:

Տարբերակված ուսուցումը ունի և՛ դրական , և՛ բացասական կողմեր:

Դրական կողմերն են՝

- *Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները հնարավորություն են ստանում իրենց զարգացման մեջ առաջընթաց ապրել*
- *Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներըավելի ինքնուրույն են դառնում*
- *Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները ավելի մոտիվացվում են ուսման նկատմամբ*
- *Ստեղծվում է հնարավորություն ուշադրություն դարձնել հետ մնացող աշակերտներին և ստուգել նրանց*
- *Թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների ինքնագնահատականը բարձրանում է*

Բացասական կողմերն են՝

- Թույլ *առաջադիմություն ունեցող* աշակերտների մոտ նվազում է ուսման շարժառիթը (մոտիվացիան)
- Թույլ*առաջադիմություն ունեցող* աշակերտները հնարավորություն չեն ունենում հասնել ուժեղներին

Հետազոտությունների արդյունքում համոզվեցինք, որ տարերակված ուսուցումը ունի ավելի շատ դրական , քան բացասական կողմ:

Այսպիսով տարբերակվում է շերտավորված ուսուցման երկու տեսակ՝

ա) արտաքին՝ հատուկ դպրոցներ, կամ դասարաններ , որտեղ ընդգրկվում են որոշակի անհատական ընդունակություններով օժտված աշակերտներ, սեր ու հետքրքրություն որևէ առարկայի նկատմամբ, բարձր առաջադիմություն ուսման մեջ, բնագիտամաթեմատիկական կամ հումանիտար թեքումով դասարաններ և այլն:

բ) ներքին՝սա ենթադրում է դասարանի ներսում որոշակի խմբերի կազմավորում, որտեղ աշխատում են քիչ թե շատ նման ընդունակություններ ու կարիքներ ունեցող աշակերտներ:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է երեք հիմնական փուլերով.

1. ***Իմանալ յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները,***
2. ***Խմբավորել աշակերտներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների***
3. ***Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընացը***

Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման

Ներդասարանային տարբերակման ամենատարածված ձևը աշակերտների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է:

- ***1-ին մակարդակում*** աշակերտին հանձնարարվում է կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը
- ***2-րդ մակարդակում*** *աշակերտին հանձնարարվում է կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ:*
- ***3-րդ մակարդակում*** աշակերտին հանձնարարվում է կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, սեփական դիրքորոշումը արտահայտել:

Շերտավորված ուսուցման ժամանակ ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուրի համար: Կան նաև դեպքեր, երբ աշակերտն է ընտրում իր առաջադրանքը: Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես աշակերտներին ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին: Մյուս դեպքում աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրում: Իսկ կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտները իրենք գտնել ու առաջարկել: Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը:

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացման ո՞ր մակարդակը կարող է հաղթահարել: Սակայն անհրաժեշտ պայման է , որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պիտի ստանա:

Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները;

Շերտավորված ուսուցման ժամանակ որոշակիացվում է գիտելիքի ընկալման 3 մակարդակներ՝

1-ին մակարդակ (նվազագույն մակարդակ)-Մտապահեցի, հասկացա, վերարտադրեցի

2-րդ մակարդակ(միջին մակարդակ)-Յուրացվել է և կիրառվում է միջին իրավիճակում

3-րդ մակարդակ(բարձր մակարդակ)– Յուրացվել է և կիրառվում է ոչ ստանդարտ վիճակում, աշխատանքին մոտենում է ստեղծագործաբար

Շերտավորված ուսուցում կարելի է իրականացնել նաև՝ կազմակերպելով խմբային աշխատանք: Այս դեպքում խմբի աշակերտները քննարկում և

միասին լուծում են տրված առաջադրանքը: Այսպիսի խմբերը կարող են լինել նույն կամ տարբեր գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեր աշակերտներից, կախված նրանից, թե ուսուցիչը ինչ նպատակներ է դրել իր առջև:

Յուրաքանչյուր խմբի աշխատանք ստուգվում է ուսուցչի կողմից՝ ենթարկվելով քննարկման:

Ծերտավորված ուսուցման ժամանակ կարևորվում է նաև հետադարձ կապը: Հայտորոշիչ թեստ անցկացնելուց հետո աշխատանքների վերլուծություն է կատարվում, այսինքն պետք է հաշվի առնել, թե աշակերտը առաջընթաց ունի, թե ոչ, ի՞նչ դժվարություններ է ունեցել, ի՞նչ սխալներ, բացթողումներ:

Այսինքն՝ որոշակիացվում է ամեն մի աշակերտի զարգացումը, որին համապատասխան էլ փոխվում է խմբերի կազմը և տարբերակված առաջադրանքների բնույթը:

Քանի որ առաջադրանքները հարմարեցվում են աշակերտների անհատական կարիքներին, ուստի աշխատանքը վերածվում է յուրօրինակ ինքնուրույն աշխատանքի՝ հնարավորրություն ստեղծելով առանձին աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում:

Տարբերակված ուսուցման ժամանակ հարցերն ու առաջադրանքները ներկայացվում են տարբերակներով.

1-ին տարբերակ՝ հիմնական ասառաջադրանք

2-րդ տարբերակ՝ ավելի մեծ ծավալով առաջադրանք

3-րդ տարբերակ՝ ստեղծագործական աշխատանք

Այս տարբերակները պայմանավորված են ընկալման երեք մակարդակներով:Այս դեպքում աշակերտն ինքն է ընտրում, այն առաջադրանքը, որը ցան կանում է կատարել: Իսկ եթե ընտրության մեջ սխալվել է, ապա կարող է փոխել առաջադրանքը: Կամ մի տարբերակը հաղթահարելուց հետո կարող է գրել մյուս տարբերակների առաջադանքները:

Իրավիճակները կարող են փոխվել՝ պայմանավորված աշակերտների հետաքրքրություններով, նախասիրություններով և ուսուցչի ստեղծագործական մտահաղացումներով:

Տարբերակված ուսուցման ժամանակ աշակերտներին օգնություն է ցուցաբերվում, այդ օգնության ձևերը նույնպես տարբեր են : Այսպես՝

- ***Խթանող*** ինքնուրույն աշխատանքի մեջ աշակերտը չի կարող մտնել, ուսուցչի բացատրությունից հետո կարող է ուղղել սխալը և շարունակել աշխատանքը
- ***Ուսուցանող՝*** աշխատանքի քայլաշարերը ուսուցիչը ներկայացնում է, ասելով, թե աշակերտը ինչ պետք է անի:

Տարբերակված առաջադրանքները կարելի է ներկայացնել նաև անհատական քարտերի, բանավոր հարցադրումների միջոցով:

Տարբերակված ուսուցման նպատակներից է ուշադրության կենտրոնում պահել ոչ միայն այն աշակերտներին, որոնք հետ են մնում կրթական ծրագրերից, այլև նրանց նկատմամբ, որոնք ունեն մեծ հետաքրքրություններ և առաջադիմություն՝ առարկան ավելի խորը ուսումնասիրելու համար:

Օժտված աշակերտների մասին խոսելով, ասենք, որ նրանց հետ աշխատանքը պահանջում է հստակ մոտեցում և մանկավարժի բարձր որակա– վորում: Նման աշակերտների հետ աշխատել այնպես, որ նրանց ընդունակությունները պահպանվի, զարգացնել ու աջակցել, հուզական ոլորտի զարգացմանը չվնասել: Առաջին հերթին ուսուցիչը պետք է տեսնի երեխայի ընդոնակությունները ու առանձնահատկությունները: Բայց հաճախ այդպես չի լինում: Առօրյա հոգսերով տարված ուսուցիչը կարող է չնկատել երեխայի օժտվածությունը:Կամ ուշադրություն դարձնել միայն անհաջողություններին, անընդհատ դիտողություններ անել և դժգոհել:

Օժտվածությունը նեղ, խստորեն սահմանափակված շրջանակներում չի զարգանում: Ընդունակությունները զարգացնելու համար պետք է միտքը մարզել: Երեխան պետք է սովորորի հաղթահարել դժվարությունները, նպատակին հասնելու համար համառություն ցուցաբերի: Շատ արդյունավետ է աշխատանքը վերահսկող կազմով փոքր խմբերում, որտեղ երեխան զրուցընկեր, ընդդիմախոս, նման հետաքրքրություններով ընկեր է գտնում, սովորում է ինքնատիպ գաղափարները մատչելի արտահայտել և դրանք ընկերների կարծիքի հետ համադրել:

Այսպիսով, խմբային աշխատանքն ուսուցչին ավելի շատ հնարավորություն է տալիս տարբեր բարդության առաջադրանքներ կիրառելու: Իսկ այդպիսի երեխաներին անհրաժեշտ է որակապես այլ մակարդակի ուսումնական նյութեր ուսումնասիրել: Դասաժամին շփման բարձր մակարդակ

պետք է ապահովել, օգտագործել միջարառկայական կապեր, շրջապատող իրականությունն ուսումնասիրելու նկատմամբ համակարգված մոտեցում:

Օժտված աշակերտները հարցերի պատասխանները ինքնուրույն փնտրելու կարիք ունեն, որի արդյունքում նրանք բացահայտում են ոչ ակնհայտ կապեր և գտնում են ինքնատիպ լուծումներ:

Այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ օժտված երեխաները ուսուցիչների համար դժվարություններ են առաջացնում: Օրինակ հաճախ խախտում են դասարանի կարգապահությունը, ձանձրանում են մտավոր թերբեռնվածության պատճառով: Հանձնարարարությունը շուտ կատարելով՝ տեղում անհանգիստ շարժվում են, շեղում են մյուսների ուշադրությունը: Միակ փրկությունը աշակերտին հետաքրքիր առաջադրանքով ծանրաբեռնելն է: Ընդ որում, առաջադրանքները պետք է ապահովեն զարգացումը ոչ միայն այն ուղղությամբ, որը երեխան հաջողում է, այլ տարբեր ուղղություններով:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Աշակերտների ինքնուրույն աշխատանքի հիմնական ձևը տնային առաջադրանքն է: Աշակերտներին տրվող տնային հանձնարարությունները բազմազան են ու բազմաբնույթ: Տնային առաջադրանքների գլխավոր առանձնահատկությունը ինքնուրույնության ապահովումն է: Այս դեպքում բացակայում է ուսուցչի ղեկավարությունը: Նրանք առաջնորդվում են դասի ընթացքում ուսուցչի տված խորհուրդներով:

Տնային առաջադրանքները հանձնարարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի աշակերտների ընդունակությունները, հետաքրքրությունները, գիտելիքները:

Շատ ուսուցիչներ մեծ ծավալի տնային առաջադրանք են հանձնարարում ամբողջ դասարանին, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ բոլոր աշակերտները չունեն ընդունակության, զարգացման միևնույն աստիճանները: Տնային առաջադրանքի միջոցով երեխաներին դաստիարարկելը բերում է մի շարք խնդիրներ, օրինակ թույլ կամ միջին կարողությունների տեր երեխան ստիպված է լինում դիմել ծնողի գնությանը՝

այդ մեծ ծավալի տնային առաջադրանքը կատարելու համար:Բայց ոչ բոլոր ծնողներն են ի վիճակի օգնել երեխաներին, շատերը չունեն բավարար գիտելիքներ և ընդունակություններ, առողջական վիճակը լավ չի, տրամադրությունն է ընկած և այլն: Եվ տնային առաջադրանքը երեխաների համար դառնում է տառապանք, քանի որ նրանք չեն կարողանում կատարել այդ առաջադրանքները:

Ուստի ուսուցիչը, տնային հանձնարարություն տալուց առաջ, պետք է հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի կարողություններն ու հմտությունները, ամեն մեկին իր ուժերի չափով առաջադրանք տա:

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ

Արտասահմանյան երկրներում շերտավորված ուսուցման հիմքում ընկած են մի շարք փիլիսոփայական ուղղություններ, որոնք պնդում են, որ մարդու ընդունակությունները պայմանավորված են ի ծնե, կենսաբանական գործոնով: Այս հանգամանքից ելնելով, որոշ գիտնականներ դիմում են տարբեր միջոցների, որ բացահայտեն մտավոր օժտվածություն ունեցող երեխաներին: Այդ պատճառով առաջին հերթին կիրառում են տեստը:

Առաջին անգամ տեստը 20-րդ դարի սկզբներին օգտագործել են հոգեբան Ա.Բինեն և բժիշկ Տ.Սիմեոնը, նրանք մշակել են հատուկ սանդղակ՝փորձարկվող երեխաների մտավոր կարողությունները որոշելու համար և որպես միջոցներ կիրառել են նրանց տրվող հարցերն ու առաջադրանքները:

Տեստերի օգտագործումը գնալով ավելի լայն տարածում ստացավ: Ըստ տեստերի շերտավորումն օգտագործում են Արևմուտքի շատ երկրներում՝ ԱՄՆ–ում, Անգլիայում, Կանադայում և այլուր:

Նշված երկրներում, երբ երեխաները դեռ նոր են ոտք դնում դպրոցի շեմին, տեստերի միջոցով, նրանց, ըստ ցուցաբերած ընդունակության, բաժանում են խմբերի: Առաջին երկու խմբերը համարվում են ավելի ընդունակների խմբեր, որոնց հետ ուսուցումը տարվում է ուրիշ եղանակով, իսկ մյուս խմբերի հետ այնքանով, որքանով նրանք ձեռք կբերեն տարրական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:

Իսկ Անգլիայում տեստերը կիրառվում են նաև պաշտոնական կարգով: Օրինակ, տարրական դպրոցն ավարտելուց հետո բոլոր երեխաները ատեստավորվում են: Դա կատարվում է այն ժամանակ, երբ լրանում է նրանց 11 տարին: Տեստային ստուգումները ավարտելուց, արդյունքներն ամփոփելուց հետո որոշվում է երեխայի սովորելու դպրոցի տիպը: Արտասահմանյան որոշ երկրներում (ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա) դպրոցական խմբերում գործում են սովորողների սեփական հետաքրքրությունները:

Շատ մեծ լսարաններում հավաքվում են տարբեր տարիքի և տարբեր դասարանների աշակերտներ: Նրանք, իրենց հետաքրքրող հարցերի շուրջ ուսուցչից ստանում են առաջադրանքներ, կոնսուլտացիաներ և ինքնուրույնաբար աշխատում են առաջադրանքների կատարման վրա: Եվ քանի որ աշակերտներին տրված առաջադրանքները լինում են տարբեր ու բազմազան, ուստի դրանք կատարելու համար դիմում են ուսումնական հատուկ կենտրոններին՝ ուսուցչի տված առաջադրանքը կատարելու համար:

Փորձարարական դաս 1

Հետազոտական նպատակով փորձարարական դասն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի VII դասարանում: Դասարանը կազմված է 31 աշակերտներից (), որոնք ուսումնառության հանդեպ ունեն տարբեր հետաքրքրություններ: Հաշվի առնելով աշակերտների ամբողջական ներգրավվածության ապահովման խդիրը,

ընտրվել էր տարբերակված ուսուցման մեթոդը: Դասի թեման էր «Հայկական մշակույթը X-XIV դարերում»:

Դասի կազմակերպչական մասն ավարտելուց հետո անցում կատարվեց հին դասի հարցմանը: Բանավոր հարցերի, փոխադարձ հարցերի , կարճ պատասխանների միջոցով ամփոփեցինք հին դասը, ստուգեցինք տնային առաջադրանքները: Այնուհետև «Մտագրոհ» մեթոդի միջոցով անցում կատարվեց նոր թեմայի ուսումնասիրությանը, որը իրականացվեց ԽԻԿ համակարգի միջոցով: Միաժամանակ կիրառվում էր տարբերակված ուսուսցման սկզբունքը: Դասի ավարտին հանձնարարվեց նաև տարբերակված տնային առաջադրանքներ (տես՝ դասապլան 1), որոնց կատարման ընտրությունը աշակերտների հայեցողությանն էր թողնված: Ավատելով փորձարարական դասը տվյալ դասարանում, կարող ենք փաստել, որ տարբերակված ուսուցումը արդունավետ մեթոդ և կիրառելի գործիք է աշակերտների համընդհանուր ներգրավվածությունը դասին ապահովելու համար:

Փորձարարական դաս 2

Փորձարարական դասն անցկացվել է Երանոս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի VIII դասարանում : Դասարանը կազմված է 20 աշակերտներից (16 տղա, 4 աղջիկ), որոնք ուսումնառության հանդեպ ցուցաբերում են տարբեր հետաքրքրություններ: Դասի թեման էր «Ազատագրական պայքարի նոր փուլը XVII դարի երկրորդ կեսի ն և X VIII դարում»: Փորձարարական դասն իրականացվում էր տարբերակված ուսուցում մեթոդով, աշակերտների համընդհանուր ներգրավվածությունը դասին ապահովելու նպատակով: Շրջված

դասարան մեթոդի միջոցով աշակերտները արդեն ծանոթ էին ուսուցանվող նյութի բովանդակությանը: Կազմակերպչական մասն ավարտելուց հետո դասարանը բաժանվեց 5 հոգանոց խմբերի, որոնց բաժանման հիմքում ընկած էր տարբերակման սկզբունքը, այնուհետև խմբերը ստացան իրենց հանձնարարությունը, որի կատարման համար տրվեց 7 րոպե ժամանակ: Հանձնարարությունը ավարտելուց հետո յուրաքանչյուր թիմ ներկայացրեց իր աշխատանքը, որտեղ ամեն աշակերտ ուներ իր բաժինը: Թեմայի ներկայագցման ավարտից հետո փոխադարձ հարցերի միջոցով ամփոփվեց դասը, պարզաբանեցինք նաև անհասկանալի հարցերը, որոնք առաջացել էին դասի ընթացքում: Ապա դասի ավարտից հետո աշակերտներին բաժանվեց ելքի քարտեր, որի միջոցով փորձեցինք հասկանալ, որքանով է յուրացվել ուսուցանվող նյութը: Ավարտին աշակերտներին հանձնարարվեց նաև տարբերակված տնային առաջադրանք ներ(տես՝դասապլան 2): Ավարտելով փորձարարական դասը կարող ենք փաստել, որ այն արդյունավետ մեթոդ է աշակերտների ներգրավվածությունը դասին ապահովելու համար:

Դ ա ս ա պ լ ա ն 1

Ուսուցիչ՝ -Աննա Հոխիկյան

Առարկա՝	**Հայոց պատմություն**	**Ամսաթիվ**	**Կիսամյակ**	**I**	**Դասարան**	VII

Թեմա՝	Հայկական մշակույթը X-XIV դարերում
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք թուղթ, գրիչ, մատիտ*
Դասի նպատակը՝	***1-ին մակարդակ-*** իմանա՝ X-XIV դարերի հայ մշակույթի ուղղությունները, գործիչներին, կրթոջախները, գիտության և արվեստի կարևոր բնագավառները: ***2–րդ մակարդակ–*** իմանա՝ գործիչների ստեղծագործություններն ը դրանց ստեղծման ժամանակաշրջանը, « Տիեզերական պատմություն» վանական համալիր, առակ, խաչքար, խազեր, շարական վադապետարան, մանրանկարչություն անվանումների ո հասկացությունների բացատրությունը: ***3-րդ մակարդակ-***իմանա՝ պատմագրության տեսակները:
	.ցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	***1-ին մակարդակ***-կարողանա՝ բացատրել հայկական մշակույթի վերածննդի նախադրյալները: ***2-րդ մակարդակ***- կարողանա ՝բնութագրել մշակույթի որոշակի ուղղության հատվածի զարգացումը, նրա ներկայացուցիչների գործունությունը, ներկայացնել Տաթևի և Գլաձորի համալսարանների գործունեությունը: ***3-րդ մակարդակ***–կարողանա՝ նկարագրել պատմագիտության ուղղությունները X-XIV դարերում, համեմատել հայ մշակույթի զարգացման տարբեր դարաշրջանները. V-IX և X-XIV դարեր:

Գործողություններ(ժամ/տևողություն)	*Ուսումնական գործունեություն* *Աշակերտներ*	*Ուսումնական գործունեություն* *Ուսուցիչ*	*Հարցադրումներ*	*Կիրառվող մեթոդ (ներ)*
Կազմակերպչական մաս-3 րոպե Հին դաս-10 րոպե Խթանում-5 րոպե Իմաստի ընկալում- 15 րոպե Կշռադատում-10 րոպե Անդրադարձ -2 րոպե	Պատմել, ձևակերպել, հիմնավորել, ներկայացնել	Պատմել, բացատրել, ուղորդել, հարցեր տալ,	***1-ին մակարդակ-*** *1 , Որո՞նք էին հայկական մշակույթի զարգացման նա խադրյալները* 2.Մշակութային ի՞նչ ուղղություններ կարող եք նշել ***2-րդ մակարդակ*** 1. ներկայացրե՛ք Գլաձորի համալսարանի գործունեությու	Մտագրոհ, ԽԻԿ

			նը: 2.ներկայացրեք Տաթևի համալսարանի գործունեությունը: ***3-րդ մակարդակ*** *Համեմատե՛ք հայ մշակութի զարգացման տարբեր փուլերը, ընդծեք նմանություններն ու տարբերությունները*:	
Տնային աշխատանք	1***-ին մակարդակ***-Գրել դասի մեջ եղած նոր անուններ հասկացությունները: ***2-րդ մակարդակ***- Ներկայացնել Գրիգոր Տաթևագու գործունեությունը: ***3-րդ մակարդակ***-Դասից առանձնացրեք և գրեք X-XIV դարերում ստեղծվա մշակութային ուղղությունները :			

Փոխտնօրեն՝ _____

Դ ա ս ա պ լ ա ն 2

Ուսուցիչ՝ ___Աննա Հոխիկյա ն

Առարկա՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ		Կիսամյակ	I	Դասարան	VIII
Թեմա՝	Ազատագրական պայքարի նոր փուլը XVII դարի երկրորդ կեսին և XVII դարում						
Դասի նպատակը՝	1-**ին մակարդակ**-իմանա՝ Հայ ազգային ազատագրական շարժման XVII դարի երկրորդ կեսի և XVII դարի հայտնի գործիչներին ***2-րդ մակարդակ***-իմանա՝ Հայ ազգային ազատագրական պայքարի առանձնահատկությունները նոր ժամանակներում ***3-րդ մակարդակ***-իմանա՝ Հայաստանի քաղաքական մասնատվածության հետևանքները հայ ժողովրդի տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում :						
Վերջնարդյունքնե							

Դասի նպատակը՝	1***-ին մակարդակ***-իմանա՝ Հայ ազգային ազատագրական շարժման XVII դարի երկրորդ կեսի և X VII դարի հայտնի գործիչներին ***2-րդ մակարդակ***-իմանա՝ Հայ ազգ այի ն ազատագրակա ն պայ քա րի առան ձ նահատկութ յունները նոր ժամանակներում ***3-րդ մակարդակ***-իմանա՝ Հայաստան ի քա ղաքակա ն մաս նատվածության հետևա ն ք ները հա ժողու վրդի տնտեսական, հասարակական-քաղա քական ու մշակութայի ն կյա նքու մ :
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	***1-ին մակարդակ***-կարողանա՝ Բացատրել սղնախներ, Խամսայի մելիքություն ներ հասկա ցություն նն երը: ***2-րդ մակարդակ***- կարողա նա՝ Բնութագրել ազատագ րակա ն պայքարի հայտ նի կազ մակերպիչ ների ղեկա վար գործիչ ներին և նրանց գործունեութ յունը: ***3-րդ մակարդակ***– կարողա նա՝ Վ երհանել ազատագ«րակա ն շարժ մա ն հայտնի գործիչ ների կատարած դերը:

Գործողություններ(ժամ/տևողություն) Կազմակերպչական մաս- 5 րոպե Հին դաս-10 Աշխատանք խմբերով-25 րոպե Անդրադարձ, տնային հանձնարարություն - 5 րոպե	Ուսումնական գործունեություն Աշակերտներ Պատմել ձևակերպել հիմնավորել ներկայացնել	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ Պատմել, Բացատրել Ուղղորդել Հարցեր տալ	Հարցադրումներ ***1-ին մակարդակ***- 1.Թվարկեք XVII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական պայքարի գործիչներին 2.Նշեք XVIII դարու մ կազմված	Կիրառվող մեթոդ (ներ) Շրջված դասարան, աշխատանք խմբերով, ելքի քարտեր
Տնային աշխատանք	***1-ին մակարդակ***-Դասից դուրս գրիր բոլոր նշանավոր իրադարձությունները: ***2-րդ մակարդակ***- Գրավոր շարադրանքի միջոցով ներկայացրեք XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում Հայաստանի ազատարության համար մշակված ծրագրերի ցանկ որևէ մեկը: ***3-րդ մակարդակ*** Բացատրեք XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում ազատագրական պայքարի ունեցած նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:			

Փոխտնօրեն՝ ___

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ տարբերակված ուսուցումը պետք է դնել ժամանակակից կրթության համատեքստում: Յուրաքանչյուր երեխա կարող է և պետք է ստանա իր կարողություններին համապատասխան կրթություն և տարբերակված ուսուցումը այս գործընթացում կարող է մի շարք կրթական խնդիրներ լուծել:

Տարբերակված ուսուցումը համընդհանուր ներգրավվածություն ապահովելու նպատակով կիրառեցի 7 և 8-րդ դասարաններում: Եվ տեսա, որ արդյունքները հիանալի են: Մինչ այդ, դասարանի աշակերտների մի մասն էր մասնակցում դասին, մի մասը՝ մասամբ, իսկ մի մասն էլ ընդհանրապես չէր մասնակցում, անտարբեր էր: Իսկ տարբերակված ուսուցման ժամանակ, երբ յուրաքանչյուր աշակերտ, իր գիտելիքներին, կարողություններին և հմտություններին համապատասխան հանձնարարություն էր ստանում, սկսում էր ակտիվություն ցուցաբերել և մասնակցում էր դասին:

Տարբերակված ուսուցումը անհատական և խմբային ձևերով փորձեցի և համոզվեցի, որ երկու դեպքում էլ արդյունավետ է՝ կախված դասի նպատակներից և բովանդակությունից:

Համոզվեցի նաև, որ տարբերակված ուսուցումը ունի ավելի շատ դրական, քան բացասական կողմեր:

Ուսուցման այս ձևը արդյունավետ է ոչ միայն թույլ աշակերտների համար, այլ նաև օժտվածների, քանի որ օժտված երեխաները հանձնարարությունը շուտ էին կատարում և անգործ նստում, իսկ երբ նրանք ստացան իրենց գիտելիքներին համապատասխան հանձնարարություն, սկսեցին հետաքրքրությամբ աշխատել:

Շատ կարևոր էր նաև տնային հանձնարարության տարբերակումը:Երբ ամբողջ դասարանին հանձնարարում էի նույն առաջադրանքը, արդյունքները գոհացուցիչ չէին, դասարանի մի մասն էր ճիշտ կատարում աշխատանքը, մի մասը թերություններով էր կատարում, մի մասն էլ չէր կատարում:

Այս խնդիրը հաղթահարելու նպատակով՝սկսեցի յուրաքանչյուր աշակերտի տնային հանձնարարությունը տալ իր հնարավորություններին և ընդունակություններին համապատասխան, որպեսզի տնային հանձնարարության կատարումը չդառնա տառապանք, այլ աշակերտները ինքնուրույն այն կատարեն, չդիմեն ուրիշների օգնությանը:

Ամփոփելով հետազոտական աշխատանքս, եկա այն եզրակացության, որ արդի կրթական համակարգում շատ է կարևորվում տարբերակված ուսուցման դերն ու նշանակությունը: Այն արդյունավետ գործիք և միջոց է , արդի կրթության հիմնաքարերից մեկն է հանդիսանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Ա.Մանուկյան « Ուսուցչի մանկավարժական գործիմացության տեխնոլոգիական համակարգը» (Հայեցակարգեր և տեխնոլոգիաներ), Երևան,2008

2) Յու. Ամիրջանյան, « Մանկավարժություն», Երևան, 2004

Համացանցային նյութեր՝

https://forum.armedu.am/forum/
https://forum.armedu.am/forum/
https://forum.armedu.am/forum/